

Ասոր կոնակը Յակովբ-Մեսրոպ Արքեպս. ինքնին կը գրէ 9 Օգ. 1766 թուականով, որ կը վկայէ թէ Ս. Գր. Լուսաւորչի իր քովը պահուած նշխարը կը շնորհէ Անտոնեանց Հռոմի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյն՝ պայմանաւ որ իր ամէն ննջեցեալ հոգիները յիշուին Ս. Պատարագի մէջ, եւ կը բաղձայ Ս. Գր. Լուսաւորչի տօնին օրը մէկ Պատարագ մատուցուի իր ննջեցելոց հոգւոց դիման, եւ ի վերջոյ զինք իսկ յիշատակեն: Նաեւ կը մեկնէ եթէ Ս. Նշխարին վաւերութեան համար երկու պաշտօնական անձինքներէ տրուած վկայական կայ: Առաջինն է Ս. Քահանայապետին Աթոռակալ-Վեքարն, եւ երկրորդն՝ Ս. Քահանայապետին Պահարանապետն (Ս. Նշխարաց հոգաբարձութեան Գահերէց): Ինքն ալ կը վկայէ Ճշմարտութեան 1766 Օգոստ. 9 թուականով, իր կրկին կնքովն, գրուած իր բնակարանին մէջ ի Հռոմ Sa Maria Maggiore եկեղեցւոյն մօտ: Ահա սոյն հայ բնագիրը:

Է.

Այս է վկայութիւն վասն գանձին Աստուածային, զոր շնորհեալ տուաք Յաղագս մեծի հարկաւորութեան, վասն զի կանգնեցաւ Տաճար Տեառն ի Հռոմ մեծին, սակա Անուան եւ փառաց Սրբոյ Հօրն մերոյ յերիցս Երանեալ Գրիգորիոս Լուսաւորչիս Մերոյ մեծի Յաբեթեան Չարմիս: Եւ պատճար կառուցման սրբոյ Տաճարիս եղեւ նիփոթեան ընդհանուր պետն Սուրբ կրօնիս, Սրբոյ